

Ֆեմինիստական, քվիր միջազգային փառատոն #2 Գենդերային կառուցվածքներ

Ֆեմինիստական, քվիր միջազգային փառատոնի երկրորդ թողարկման հղացական հիմքում գենդերային իմացաբանության և կառուցվածքների վերլուծությունն ու ներկայացումն են, որի կարևորությունը բազմիցս շեշտադրվել է ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային ֆեմինիստական երկխոսություններում: Ֆեմինիստական պրակտիկաներին և տեսություններին արվող հղումները պատահական չեն, քանի որ գենդերային ուսումնասիրություններն առաջին հերթին օգտագործում են այդ տեսությունների մեթոդաբանությունը և, դրանցով միջնորդված, մեր օրերի այլ քննադատական դիսկուրսներ:

Մեռի պատմությունը սեփական կախվածության հիմքերը սասանելու սկզբնական ճիգից հետո դրսևորվեց նաև որպես իրեն ստրկացնող դիսկուրսները ապակենտրոնացնելու ձգտում: Ժամանակակից մշակույթում և մտածողության մեջ նկատվում է սուբյեկտիվության իմացաբանության մեջ կատարվող ակնհայտ շրջադարձ, պարադիգմային տեղաշարժ, որը ձեռք է բերում գենդերային դրոշմ: Որպես արդեն հաստատված գիտության բնագավառ՝ գենդերային ուսումնասիրությունները ընդգծում են առարկայի առանձնահատկությունը, որը հետազոտում է ոչ միայն կնոջ և տղամարդու սուբյեկտիվությունը, որ հակադրվում են ըստ երկբևեռ (բինար) մոդելի, այլև մի խումբ ոչ բինարային սուբյեկտիվության տիպեր՝ գեյ, լեսբիական, քվիր (տարօրինակ), տրանսգենդերային: Գենդերային կառուցվածքներում գոյություն ունի նաև եռասեռականությունը, հոսուն/փոփոխվող, չեզոք գենդերը, ապասեռականն ու համագենդերայինը՝ ինքնության մի շարք այլ տիպերի հետ մեկտեղ: Այսպիսով՝ գենդերային պրակտիկաներն է՛լ ավելի բազմազան են դարձել և շարունակում են ընդլայնվել, քանզի գենդերային ինքնության, սեփական ընկալման և պատկանելության առանցքում «ո՞վ եմ ես» կրկնվող ու չնահանջող հարցադրումն է: Մարդն ազատ է կառուցելու և քանդելու ինքնություններ, հարաբերություններ, փոխելու սեփական սեռը: Անձնականի նշանակումը ստանում է խթաններ կենսասոցիալականի կողմից պարտադրված քաղաքականություններից ազատագրվելու համար:

Կենսասոցիալական տեսությունը պնդում է, որ կենսաբանական դիսֆունկցիան, զուգորդված արժեգրկվող միջավայրի հետ, հանգեցնում է համատարած հուզական ապակարգավորման: Սրան հակադրվում է մի շարք ֆեմինիստների կարծիքը, թե մարդու համար փոփոխականությունը, բազմակի դերերը, վերամարմնավորման առաջ բացությունը իդեալական բաղադրիչներ են: Դրանք կիրառելով՝ նա իր համար ապահովում է գոյության առավել լիարյուն մոդել՝ ավելի հեշտությամբ խորամուխ լինելով անձնականի և հանրայինի ոլորտների դինամիկայի և Ես-ի կառուցման մեջ: Գենդերն իր ուսումնասիրությունների ու կառուցվածքների շարքին կցել է նաև նոր մեթոդաբանական ապարատ, որը դիտարկում է ռասայական, էթնիկական, ազգային, գաղութային, հետգաղութային, դասակարգային հղացքները, և այս ընդլայնվող բազմազանության առանցքում գենդերային մարգինալացման, սուբյեկտիվության ճնշման պրակտիկաների մասին խոսելը չի կորցնում իր կարևորությունը և չի նվազում: Բազմաթիվ գենդերային ուսումնասիրություններ դիմում են նաև հետարդիության դարաշրջանի փիլիսոփայական դիսկուրսի մեջ ի հայտ եկած «ուրիշի» և «այլի» ակտուալ թեմային: «Այլի» և «ուրիշի» տարբերությունը հիմնավորվում է ոչ որպես տրամաբանական, այլ որպես գաղափարաբանական: Ի տարբերություն բազմամշակութայնության հռետորության՝ ժամանակակից մշակույթում ուրիշ լինելը հաճախ նշանակում է գտնվել հիմնավորապես ոչինչ չունենալու, այն է՝ քաղաքական մարգինալացման և խտրականության ենթարկվածի դիրքում:

Կատարելով մի փոքր շեղում ի սեր «ուրիշի» խնդրի իմացաբանական ըմբռնման՝ անհրաժեշտ է ընդգծել, որ հասկացությունը, նախնական ձևակերպմամբ, սկիզբ առնելով երկրորդ արիքի ֆեմինիզմի և ֆեմինիստական էքզիստենցիալիզմի որոշ տեսական մշակումներում, մինչև այսօր էլ սահմանափակում է «ուրիշի» ֆենոմենի շրջանակը՝ հղելով միայն կանացի սուբյեկտիվությանը: Բուն ձևակերպումները ոչ թե պարզապես չեն ակտուալացնում կնոջ բազմակի «ուրիշություն» հասկացությունը, այլև բարձրացնում են «ուրիշ» կանացի» հասկացությունը ունիվերսալ մակարդակի՝ անուշադրության մատնելով նույն կանացի սուբյեկտիվության ներսում առկա «ուրիշ» պրակտիկաներ, հետգաղութային, գունամորթ, լեսբի, քվիր և այլ ինքնություններ:

Այսպիսով՝ էսենցիալացվում է կանացի սուբյեկտիվության խնդիրը, ներկայացվում որպես ընդհանուր կանացի սեռի բոլոր ներկայացուցիչների համար, որոնց միավորում է միասնական կանացի անկրկնելի փորձառությունը:

Իր «Կիբորգների մանիֆեստում» Դոննա Հարաուեյը, մեկ անգամ ևս ուշադրություն հրավիրելով սոցիալական, մշակութային համատեքստում մշտապես գոյություն ունեցող «տագնապալի դուալիզմների» վրա (Ես/ուրիշ, հոգի/մարմին, մշակույթ/բնություն, արական/իգական, քաղաքակիրթ/ նախնադարյան, իրականություն/երևութականություն, ակտիվ/պասիվ, աստված/մարդ), մարտահրավեր է նետում այդ դուալիզմներին, որոնք «համակարգային ձևով զուգակցվում են կանանց, գունամորթների, աշխատավորների, կենդանիների՝ բոլոր նրանց, ովքեր կառուցվում են որպես ուրիշներ, նկատմամբ տիրապետության հաստատման տրամաբանությունների և պրակտիկաների հետ:

Այսպիսով՝ «ուրիշը» մեկնաբանվում է որպես անհավասար, անկախ նրանից՝ այդ «ուրիշը» տիրապետող է, թե կախյալ, իսկ «այլը» ներկայացվում է որպես հավասար, բայց տարբեր

Ֆեմինիստական, քվիր փառատոնի երկրորդ թողարկումը բաղկացած է ցուցահանդեսներից և հանրային միջոցառումներից, որտեղ, ի թիվս վերը նշված և այլ թեմաների, ներկայացվել և քննարկվել են գենդերային ինքնությունների ծագումնաբանությանը վերաբերող պատմական «պեղումները», «հետգաղութային շրջադարձի», Սփյուռքի ֆեմինիզմի, արևմտյան և ոչ արևմտյան արվեստում և ակտիվիզմում քվիր, ֆեմինիստական պրակտիկաների համընկնումներն ու տարբերությունները, նաև աշխատանքի ոչ սիմետրիկ բաշխմանը և վճարմանը, կանանց վերարտադրողական առողջությանը, ընտանիքին, մայրությանը, սելեկտիվ աբորտներին առնչվող խնդիրներ:

Հանրային բանախոսությունները տեղի են ունեցել 2023 թվականին, իսկ արվեստի աշխատանքները ներկայացնում են 2000-ականներից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանի արվեստագետների աշխատանքները՝ ընդգծելու համար թե՛ անցյալի, թե՛ ներկայի ստեղծագործական, հասարակական, քաղաքական և գենդերի շուրջ խորհելու կարևորությունը: